րուել. բայց ոչ նորա իրանք են համոզուել և ոչ նոցա նախնիք։

Մի մեծ գործով երախտապարտ է կացուցել մեզ երկու հայ կաթոլիկ վանքերի միաբանութիւնը, որ նպաստել են մեր դասական գրականութեան և հրատարակել են մեր մատենագիրները. բայց այժմ գիտութիւնը մի մեծ խնդիր ունի վճռելու՝ թէ որքան հարազատութիւն ունին այն հրատարակութիւնները, որ հայոց կրօնին են վերաբերում, վասն զի «Վարդան Բարձրբերդցու», «Յովհան Օձնեցու», «Կիրակոս Գանձակեցու» և այլ պատմագիրների «տեքստի» մէջ գրուած հարցական ու զարմացականները և տարօրինակ ծանօթութիւնները զանազան կասկածների առիթ են տալիս բուն հայ մարդուն, հայ գրականութեամբ պարապողին։

Թողնենք այս ամենը ժամանակի, վաստակաւոր Մարկոս, և ս. Գրիգոր Լուսաւորչի հետ ասենք միասին «իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս . . . ». կրկնենք միասին.— իսկ մենք սպասում ենք Հ. Հ. Մխիթարեաններից միմիայն գիտութիւն և գիտութիւն և ոչ երբէք կրօն։

---

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Ներկայ համարից սկսած, իբրև յաւելուած, թերթ թերթ սկսում ենք տպագրել «Լումայ»ի մէջ Ն. Բ. Սրբ. Արիստակէս Արքեպիսկոպոս Դաւթեանի «Կանոնք ս. Ժողովոց» աշխատութիւնը, որ երկասիրողը ուղարկել է մեզ խմբագրութեանս յատուկ խնդրանօք։ Առ այժմ մենք տպում ենք տեքստը նոյնութեամբ, իսկ յառաջաբանն ու կարևոր ծանօթութիւնները կտանք, երբ ամբողջ տպագրութիւնն աւարտած կլինինք։

---

Խմբագրութիւնս բաղդ ունեցաւ ստանալ Ազգիս վեհ. Հայրապետի կողմից, իբրև նոր տարուայ շնորհաւորութիւն, Էջմիածնատիպ օրացոյց։

---

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը որոշել է տարւոյս մայիս ամսին հանդիսաւոր կերպով կատարել նոյն դպրոցի հօթանասուն և հինգամեայ յոբելեանը։

---

Պ. Բուրգից շնորհ. Սիմէոն սարկ. Մնացականեանը, անցեալ տարիների նման, «Հումայ»ի երկու օրինակի բաժանորդ գրուելով՝ մէկը թողնում է խմբագրութեանս անօրէնութեան։ Այդ օրինակը որոշուեցաւ ուղարկել Ծընևի հայ ուսանողական ընկերութեան։

---

Այս համարում մենք տպագրում ենք միայն այն լրագիրների և հանդէսների յայտարարութիւնները, որոնք անվճար հրատարակել են և «Հումայի» յայտարարութիւնը. և «Հումայ» ուղարկում ենք այն պարբերական հրատարակութիւններին, որոնք փոխարէնը ուղարկում են մեզ իրանց հրատարակութիւններից։

---

«Հումայ»ի համար ուղարկելիք յօդուածները պէտք է գրուած լինին պարզ և մաքուր։

Այն յօդուածները, որոնք խմբագրութիւնից արժանի կրդատուին տպագրութեան, կարող են փոփոխութեան ենթարկուիլ խմբագրութեան հայեցողութեամբ։

Յունուարի գրքի համար յօդուածներ ընդունւում են մինչև նոյեմբերի 1-ը. յուլիսի գրքի համար՝ մայիսի 1-ը։

Չվերջացրած յօդուածներ չեն ընդունւում։

---